ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-6

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

16.12. 2022թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցում էին գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Թ. Վարդանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ Թ. Ջանվելյանը, Հ. Սանթրոսյանը, Լ. Մնացականյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը ներկայացրեց նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաղորդում I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ: Ժամանակացույցերի հաստատման մասին /զեկ. Ա. Մարգարյան/:
2. I կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի հաստատման մասին /զեկ. Ա. Մարգարյան/:
3. Հաղորդում II կիսամյակում նախատեսված պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին /զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
4. Հաղորդում մոնիթորինգի աշխատանքային խմբի կատարած աշխատանքների վերաբերյալ /զեկ. Գ. Հովհաննիսյան/:

Բաց քվեարկությամբ՝ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում՝ 6/1

-Հաստատել նիստի օրակարգը:

1. ***Լսեցին.- Հաղորդում I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին: Ժամանակացույցերի հաստատման մասին /զեկ. Ա. Մարգարյան/:***

Ա. Մարգարյանը հաղորդեց I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին, մասնավորապես նշելով, I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների կազմակերպման ժամանակահատված է սահմանված ս/թ դեկտեմբերի 22-29-ը: Նախապես հստակեցնելով յուրաքանչյուր ընթացիկ քննության և ստուգման իրականացման ձևերը՝ համապատասխան ամբիոնները սահմանված ժամկետներում ստացել են քննական տոմսերն ու թեստերի նմուշները: Կազմվել են նաև ժամանակացույցերը /կցվում է/:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաստատել I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցերը:

Որոշեցին. - Հաղորդումը I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին ընդունել ի գիտություն:

2. ***Լսեցին.- I կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի հաստատում /զեկ. Ա. Մարգարյան/:***

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ առաջին կիսամյակի քննաշրջանը կանցնի կազմված ժամանակացույցով: Նա նշեց, որ ժամանակացույցի կազմման ժամանակ հաշվի են առնվել ուսանողների և դասախոսների առաջարկներն ու նկատառումները: Ամբիոնների դասախոսներին հիշեցվել է քննական տոմսերը սահմանված ժամկետում ամբիոն ներկայացնելու մասին:

Արտահայտվեցին.- Մ. Միքայելյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հաստատել I կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

3. ***Լսեցին.- Հաղորդում II կիսամյակում նախատեսված պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ /զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:***

Մ. Միքայելյանը փոխանցեց, որ արտադրական պրակտիկաներ նախատեսված են Ֆինանսներ (ըստ ոլորտի) մասնագիտությամբ III և IV կուրսերում: Պրակտիկաները իրականացվելու են կազմած ժամանակացույցով: Նա հիշեցրեց, որ պրակտիկայի ղեկավարը պետք է ունենա ծրագիր՝ համաձայնեցված պրակտիկայի վայրի ղեկավարի հետ: IV կուրսի ուսանողները արտադրական պրակտիկայի ընթացքում կձևավորեն որոշակի կոմպետենցիաներ, ինչպես նաև ձեռք բերեն տվյալներ, որոնք անհրաժեշտ կլինեն ավարտական աշխատանքները պատշաճ կատարելու համար: III կուրսի ուսանողների արտադրական պրակտիկան առավելապես միտված կլինի կազմակերպությունների կառուցվածքի, փաստաթղթերի ծանոթությանը: Միևնույն ժամանակ նրանք կարող են պրակտիկայի կազմակերպությունից հայթայթել հետազոտական աշխատանքեր իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկություններ և տվյալներ: Այդ հանգամանքը

կդյուրացնի չորրորդ կուրսում ավարտական աշխատանքի ավելի արդիական թեմայի առաջարկությունը:

Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց երկրորդ կիսամյակում իրականացվելիք պրակտիկաների ցանկը: Նա նշեց, որ պրակտիկայի արդյունավետ անցկացման համար արդեն իսկ որոշվել է ամբողջ գործիքակազմը: Պրակտիկայի ղեկավարներն ունեն իրենց ծրագրերը, որոնք նախապես քննարկվել և հաստատվել են ամբիոնի նիստում: Զբոսաշրջություն մասնագիտությամբ սովորող ուսանողներին հանձնարարվել է ինքնուրույնաբար ստեղծել իրենց բնակության վայրերի զբոսաշրջային օբյեկտների ներքին ու արտաքին միջավայրերի նկարագրությունն ու դրանց հագեցումը լուսանկարային նկարազարդումներով: Այս մեթոդը միտված է պրակտիկայի մասնակցի հետազոտական աշխատանքի խրախուսմանը, ինչպես նաև ընդլայնում է ուսանողի հայրենաճանաչության սահմանները:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- II կիսամյակի պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հաղորդումը ընդունել ի գիտություն:

4. ***Լսեցին.- Հաղորդում մոնիթորինգի աշխատանքային խմբի կատարած աշխատանքների վերաբերյալ /զեկ. Գ. Հովհաննիսյան/:***

Մոնիթորինգի աշխատանքային խումբը ամբողջական տեղեկատվություն է հավաքագրել հետևյալ կետերի վերաբերյալ.

- ընդունելությունը և ուսանողական համակազմը,
- ուսումնական առաջադիմության ցուցանիշները,
- ծրագրի շրջանավարտների վերաբերյալ տվյալները,
- ուսանողական հարցումների արդյունքները,
- ծրագրի շահակիցների արձագանքը:

Ուսանողների և դասախոսների շրջանում իրականացվել են հարցումներ, կազմակերպվել են քննարկումներ Zoom հարթակում, կազմակերպվել է հանդիպում արտաքին շահակիցների հետ: Այժմ իրականացվում է տվյալների ամփոփում:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ» (ըստ ոլորտի) ԿԾ ընթացիկ մոնիթորինգ իրականացնող խմբի աշխատանքները գնահատել բավարար:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ա. Մարգարյան

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան